ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԶԱՎԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Ժողովրդական դեպուտատների Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմը, ընդառաջելով բնակչության առաջարկություններին՝ հավերժացնելու արցախածնունդ հանրահանաչ գործիչների հիշատակը, որոշում է ընդունել քաղաքի մի շարք փողոցներ և հիմնարկ-ձեռնարկություններ նրանց անունով կոչելու մասին:

Որոշմամբ անհատի պաշտամունքի զոհ դարձած բանաստեղծ Գրիգոր Ներսիսյանի, հանրահայտ գրող Լեոնիդ Հուրունցի, խորհրդահայ պոետ Աշոտ Գրաշու, արձակագիր Սարգիս Աբրահամյանի, գրող Վազգեն Օվյանի, բանաստեղծ Միքայել Հարությունյանի, գիտնականներ Լեոյի, Առաքել Առաքելյանի, Արսեն Տերտերյանի, Աշոտ Հովհաննիսյանի, Աշոտ Տեր-Մկրտչյանի, Օրբելի եղբայրների, հայ գրականության դասական Մուրացանի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ-Վաղարշյանի, խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի, խորհրդային Միության հերոսներ Իսահակ Մանասյանի, Իվան Թևոսյանի և ուրիշների անուններով կոչվեցին քաղաքի փողոցներ, Խաչատուր Աբովյանի, Բաֆֆու, Ղազարոս Աղայանի անուններն ստացան քաղաքի № № 1, 2, 5 դպրոցները:

Արցախածնունդ հայ զավակներից բացի, գործկոմը հայ ժողովրդի ազգային հերոս Անդրանիկ զորավարի, ֆիդայի Դևորգ Չաուշի, Հովհաննես Շիրազի, Գարեգին Սեսակի, Արամ Խաչատրյանի, Մարտիրոս Սարյանի, Խաչիկ Օրու, Հայկ Բժշկյանցի, Դանիել Վարուժանի անուններով կոչեց քաղաքի մի շարք փողոցներ և հիմնարկ-ձեռնարկություններ: Քաղաքի կենտրոնական փողոցներից մեկը ստացավ Սասունցի Դավթի, մարզային հանրային գրադարանը՝ Մեսրոպ Մաշտոցի անունը, իսկ քաղաքի 1500-ամյա Վարարակն բաղամասի մուտք-փողոցին տրվեց Ստեփանակերտի հիմնադիր Վաչագան Բարեպաշտի անունը: 1990 թվականի սեպտեմբերին, Ստեփանակերտի հիմնադրման 1500-ամյակի տոնակատարության ժամանակ, այստեղ կտեղադրվի նրա արձանը:

Արցախը հավերժացնում է իր զավակների անունները:

ՄԻԱԿ ԵԼՔԸ

Արցախի մշակութային հիմնարկների կոլեկտիվներում քննարկվեցին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դեկտեմբերյան որոշումները:

Մարզի մշակութային օջախների աշխատողները միահամուռ որոշում կայացրին իրենց դուրս հանարել Ադրբեջանի կուլտուրայի մինիստրության կազմից և ճանաչել Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրությունը, առաջնորդվել մայր Հայաստանից եկած ծրագրերով, նրա պահանջներով:

Օրերս կայացավ Ստեփանակերտ քաղաքի կուլտուր-լուսավորական հիմնարկների աշխատողների ակտիվի նիստը, ուր քննարկվեցին նստաշրջանի որոշումները: Նիստում ելույթ ունեցողները դատապարտեցին ադրբեջանական ժողովրդական ճակատի ծայրահեղականների գործողությունները:

— Օրերս Ադրբեջանի կուլտուրայի մինիստր Ֆ. Բուլ-բուլ-օղլու ստորագրությամբ հրաման ստացանք, որով պահանջվում է Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման 70-ամյակին նվիրված երաժշտության տոնին նախապատրաստել միայն ու միայն ադրբեջանական ժողովրդական և պրոֆեսիոնալ երգ-երաժշտություն, — ասաց քաղաքի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի տնօրեն էդվարդ Ղազարյանը: — Չգիտենք՝ այս մարդիկ մինչև ե՞րբ պետք է մեր հոգու հետ խաղան: Արդեն երկրորդ տարին է, ինչ մենք այդ մինիստրությունը, ընդհանրապես ադրբեջանական իշխանությունը չենք ընդունում, ոչ մի կապ չենք պահպանում նրանց հետ, բայց անա նրանք մեզնից ձեռք չեն քաշում:

Ադրբեջանական ազգայնամոլների գործողությունների մասին բազմաթիվ փաստեր նշվեցին: Նշվեց նաև այն մասին, որ անցած 70 տարում ադրբեջանական կառավարությունը միշտ ուղղակի և անուղղակի ճանապարհներով խափանել է Ստեփանակերտում հայ մշակույթի զարգացումը, չի կառուցվել թեկուզև մեկ մշակութային խրճիթ:

Խորհրդակցության մասնակիցները գործարար շատ առաջարկություններ արեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորման մասին որոշման իրականացման գործում մշակութային ճակատի աշխատողների ակտիվ մասնակցության ապահովման, արցախահայության հոգևոր պահանջների բավարարման ուղղությամբ: Նշվեց նաև այն, որ այսօր է՛լ ավելի մեծ է հայոց ազգային շարժման պատասխանատվությունը ժողովրդի երկամյա պայքարի նվաճումները պաշտպանելու և շարժմանը նոր ընթացք տալու գործում:

Լ. ՄԿՐՏՉՅԱՆ
(Մեր սեփ. թղթ.)